ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«28» հոկտեմբերի 2019 թվականի №547-Ա քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 6-Ի N: 59-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-4-րդ մասերի դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2010 թվականի ապրիլի 6-ի «Քաղաքացիական պաշտպանության Շիրակի մարզային ծառայություններ ստեղծելու, ծառայությունների պետեր նշանակելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2003 թվականի հունիսի 16-ի № 228-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» № 59-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Քաղաքացիական պաշտպանության Շիրակի մարզային ծառայությունների պետերին՝

20-օրյա ժամկետում կազմել ծառայությունների կանոնադրությունները, համաձայնեցնել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության հետ և ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի հաստատմանը:

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
փոխարինող

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2019 թվականի հոկտեմբերի 28-ի N 547Ա որոշման
«Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2010 թվականի ապրիլի 6-ի № 59-Ա որոշման

Ց Ա Ն Կ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ

1. **Կապի ծառայություն**-ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քարտուղարության պետ,
2. **Ինժեներական և կոմունալ-տեխնիկական ծառայություն**-ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի պետ,
3. **Բժշկական ծառայություն**-ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ,
4. **Տրանսպորտային ծառայություն**-ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ,
5. **Առևտրի և սննդի ծառայություն**-ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ֆինանասական և սոցիալ- տնտեսական զարգացման վարչության պետ,
6. **Էներգետիկայի ծառայություն**-ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի պետ,
7. **Բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայություն**-ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ,
8. **Հասարակական կարգի պահպանման ծառայություն**-ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության Շիրակի մարզային վարչության պետ,
9. **Նյութատեխնիկական մատակարարաման ծառայություն**-ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ,
10. **Բնակչության հատուկ սպասարկումների ծառայություն**-ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

փոխարինող